

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

(XIX դ. երկրորդ կես)

Ր. Բ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Արևելագիտության, մասնավորապես հայագիտության զարգացումը Ռուսաստանում մեծապես պայմանավորված էր Մերձավոր արևելքում և Կովկասում Ռուսաստանի վարած արտաքին քաղաքականությամբ։ Կայսրության սահմանների ընդարձակումն Արևելքում և Կովկասում, նոր միացված տարածաշրջանների տնտեսական և քաղաքական յուրացումը հրամայաբար պահանջում էին գրանցում ապրող ժողովուրդների լեզուների և բարբերի իմացություն, տեղական ժողովուրդներից գահին նվիրված աստիճանավորների պատրաստում։ Այդ ուղղությամբ առաջին քայլերը կատարվել էին դեռևս XVIII դ. 60—80-ական թվականներին, երբ լույս էին տեսել Ռուսաստանում թուրքերեն, վրացերեն, հայերեն, շերմիսերեն, շուվաշերեն լեզուների առաջին ձեռնարկները¹։ Արևելյան լեզուների ուսումնասիրման գործն ավելի լուրջ գիտական հենքի վրա դրվեց XIX դ. սկզբին։ Արդեն 1804 թ. համալսարանական կանոնադրությամբ կառավարությունը պահանջում էր «Արևելյան լեզուների դասավանդման կուրս մտցնել բոլոր համալսարաններում՝ գիտության պահանջներին համապատասխան»²։ Դա Ռուսաստանում արևելագիտության բարձրագույն դպրոցի հիմնադրման ուղղությամբ առաջին կառավարական կարգադրությունն էր։

Հայագիտությունը սկզբնապես փոքր ի շատե տեղական գրանցում ստացավ Կազանի համալսարանում, ուր XIX դ. առաջին կեսին կենտրոնացվում էին արևելյան լեզուների ուսումնասիրումն ու դասավանդումը։ Հայոց լեզվի ամբիոնն այստեղ պաշտոնապես բացվեց 1839 թ. մարտի 14-ին՝ մեկ օրդինար պրոֆեսորի հաստիքով³։ Հայոց լեզվի առաջին դասախոսությունները Կազանի համալսարանում կարդացվեցին 1842 թ. սեպտեմբերին։ Ամբիոնի պաշտոնական հիմնադրման և ռեալ գործունեության միջև ընկած շուրջ երեքամյա ժամանակահատվածի պատճառը համապատասխան դասախոսի բացակայությունն էր։ Ի վերջո ժողովրդական լուսավորության միևնույնության րնտրությունը կանգ առավ Դորպատի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի և նույն համալսարանի պրոֆեսորական ինստիտուտի շրջանավարտ Ստեփանոս Նադարյանցի թեկնածության վրա։ 1842—1849 թթ. գրված խավդիով Կազանի համալսարանի հայոց լեզվի ամբիոնը՝ Նադարյանցի միաժամանակ զբաղվում է նաև ակտիվ գիտական աշխատանքով, 1846-ին պաշտպանեց մագիստրական, իսկ 1849-ին՝ դոկտորական դիսերտացիաներ։ Չնայած ակտիվ բարձրորակ մասնագետի առկայությանը (Ս. Նադարյանցի մինչև 1864 թ. Ռուսաստանում արևելյան բանահյուսության միակ

¹ С. К. Буклич, Очерк истории языкознания в России, т. I, СПб., 1880, с. 431—432, 446—448.

² Н. И. Веселовский, Сведения об официальном преподавании восточных языков в России. Труды третьего международного съезда ориенталистов в Петербурге 1876 г., т. I, СПб., 1880, с. 110).

³ Журнал министерства народного просвещения, отд. I, СПб., 1909, с. 122; В. В. Бартольд, Материалы для истории факультета восточных языков. Обзор деятельности факультета за 1855—1905 гг., т. IV, СПб., 1909, с. 65.

դոկտորն էր)⁴, հայագիտությունը Կազանի համալսարանում այդպես էլ չհաջողվեց պատշաճ մակարդակի հասցնել. չկային դասագրքեր ու ծրագրեր, համալսարանը տարիներ շարունակ չէր ապահովվում հայերենն ուսումնասիրել ցանկացող ուսանողներով:

XIX դ. 40-ական թվականներից արևելյան լեզուների դասավանդումը, չնայած Կազանի ուսումնական օկրուգի նախկին հոգաբարձու Մուսին-Պուշկինի բոլոր հակառակ փաստարկներին, կենտրոնացվեց Պետերբուրգի համալսարանում: Այդ խնդրում վճռական դեր խաղաց ժողովրդական լուսավորության մինիստրի հայտարարությունը, թե կայսեր կամքով բոլոր կովկասյան և անդրկովկասյան թողակները հատկացվում են Պետերբուրգի համալսարանին, ինչը բացառում էր արևելյան լեզուների դասավանդման դադարեցումը Պետերբուրգի համալսարանում: 1849 թ. հունիսի 11-ի կանոնադրությունը, որով կովկասյան ուսանողների թիվը 5-ից հասցվում է 20-ի, վերջնականորեն պարզ դարձրեց այդ հարցում որևէ փոփոխության անհնարինությունը: Պետք է կարծել, որ Կովկասյան կոմիտեն, որը գտնվում էր Պետերբուրգում, ցանկանում էր ավելի անմիջականորեն իրականացնել վերահսկողություն իր թողակառուների նկատմամբ: Անկասկած, արտաքին գործերի մինիստրությունը ևս չէր ցանկանում, ինչպես առաջարկում էր Մուսին-Պուշկինը, ապագա դիվանագետների ուսուցումը կենտրոնացնել Կազանում: Պարզվեց, որ Արևելքում տարբեր բնագավառներում աշխատելու համար նախապատրաստվող երիտասարդների ուսուցումը կառավարությունը հնարավոր է համարում միայն Պետերբուրգում, ուր կենտրոնացված էին կառավարական կառույցի բոլոր կենտրոնական մարմինները: Վերը նշված որոշմանը մեծապես նպաստեց նաև այն, որ Պետերբուրգի համալսարանի բացման առաջին իսկ օրերից նրա պատմաբանասիրական ֆակուլտետի ուսումնական ծրագրերում մեծ տեղ էր հատկացված արևելյան բանահյուսության և լեզուների ուսումնասիրմանը: Այսպիսով, արևելագիտության, մասնավորապես հայագիտության զարգացումը Ռուսաստանում երկար տարիներ կապվեց Պետերբուրգի համալսարանի հետ: 1844 թ. հուլիսի 24-ին հրապարակվեց հրամանագիր «Սանկտ Պետերբուրգի համալսարանի Արևելյան բանահյուսության բաժանմունքում վրացերեն, հայերեն և թաթարերեն լեզուների դասավանդման մասին»⁵, դասավանդվելիք առարկաները ունենդիրներով ապահովելու նպատակով 1845 թ. հունվարի 11-ին որոշում ընդունվեց «ամեն տարի Պետերբուրգի համալսարանի արևելյան բանահյուսության բաժանմունք ծննդյամբ կովկասցի հինգ երիտասարդների գործուղման մասին»⁶, 1845 թ. արևելյան բանահյուսության բաժնում ուսումնասիրվող լեզուներին ավելանում են հայերենը, վրացերենը և թաթարերենը (ադրբեջաներեն)⁷ իրենց համապատասխան ամբիոններով: Սկսած այդ շրջանից՝ Կովկասից ամեն տարի համալսարան պետք է գործուղվեին հինգ մարդ՝ Թիֆլիսի գիմնազիան ավարտողներից: Այդ հարցում ցարական կառավարության նպատակներն ու դասակարգային քաղաքականությունը պարզորոշ արտացոլված են կառավարության՝ դեռ 1844 թ. հունվարին Պետերբուրգի համալսարանին ուղարկված հետևյալ հրամանագրում. «Թագավոր կայսրը, ուշադրություն դարձնելով այն բանի վրա, որ Անդրկովկասում պակասում են ընդունակ և վստահելի աստիճանավորներ քաղաքացիական ծառայության համար և ընդունելով, որ այդ պակասը կարելի է լրացնել միայն ծագումով կովկասցի երիտասարդների ուսուցման ճանապարհով, այդ նպատակին հասնելու մյուս միջոցառումների հետ հաճեց հրամա-

⁴ В. В. Бартольд. *Изв. акад.*, т. I, II. *П. Петербург*, 1909, л. 423.

⁵ А. М. Куликова, Восточное образование в Петербургском университете в первой половине XIX века и учреждение факультета восточных языков, Л., 1970, с. 244.

⁶ Полное собрание законов, собрание II, т. XX, отделение I, № 18613. СПб., 1845.

յել. 1. Սանկտ-Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների բաժանմունքում պետական հաշվով դաստիարակել հինգ երիտասարդներ բնիկ կովկասցիներից՝ պատրաստելով նրանց թարգմանչների պաշտոն վարելու համար: Նույն հրամանի ետևից կետով Կովկասյան երկրամասի գլխավոր կառավարիչ Վորոնցովին նախազգուշացվում էր, որ համալսարանի ապագա ուսանողները պետք է ընտրվեն «խիստ անկախ և ազնվական հայտնի ու հաղթած, ինչպես նաև խանական ու բեկական ընտանիքներից և ուս ալն աստիճանավորների երեխաներից, որոնք ընդմիշտ նվիրել են իրենց Անդրկովկասում ծառայելուն և աչքի են ընկնում ջանասիրությամբ: 3. Այդ երիտասարդներին համալսարան ընդունելու նախապատրաստումը կատարվելու է Թիֆլիսի գիմնազիայում: 4. Նրանց ուսման, ապրելու և ճանապարհի բոլոր ծախսերը հոգում է պետական գանձարանը: 5. Կովկասյան ուսանողների տարեկան քննությունների ժամանակ հրավիրել կայսերական անձնական գրասենյակի կովկասյան երկրամասի գործերի բաժնի կառավարչին, իսկ կիսամյակային և տարեկան քննություններից հետո կայսերական անձնական գրասենյակին և կովկասյան երկրամասի գլխավոր կառավարչին ներկայացնել մանրամասն հաշվետվություն՝ կովկասյան ուսանողների առաջադիմության և վարքի մասին: Համալսարանն ավարտելուց հետո կովկասյան սաները պարտավորվում էին 6 տարի ծառայել կովկասյան երկրամասի գլխավոր կառավարչի առաջարկած պաշտոններում: Ինչպես տեսնում ենք, կառավարությունը կովկասյան ուսանողների ուսումնասիրությանը բավական կարևոր տեղ էր հատկացնում՝ միաժամանակ արթուն հսկողություն սահմանելով նրանցից յուրաքանչյուրի վրա: Նույն հրամանագրում նոր մտցված լեզուների ուսուցումը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար առաջարկվում էր շուտափույթ կազմել այդ առարկաների ուսումնական պլաններն ու ծրագրերը: Զբաղարարվելով ձեռնարկած միջոցառումներով՝ կառավարությունը 1849 թ. կովկասյան սաների թիվը հասցրեց 20-ի՝ այդ երիտասարդ անձանց ինչպես Կովկասում, այնպես էլ նրանից դուրս պետական ծառայության նախապատրաստելու համար»⁷։ Արևելյան լեզուների դասավանդումը Պետերբուրգի համալսարանում ավելի բարձր մակարդակի վրա դրվեց 1854 թ., երբ պատմաբանասիրական ֆակուլտետի արևելյան բանահյուսության բաժնի հիմքի վրա բազմեց արևելյան լեզուների ֆակուլտետի իր 9-րդ արաբերենի, պարսկերենի, թուրք-թաթարերենի, մոնղոլ-կալմիկերենի, չինարենի, հրեերենի, հայերենի, վրացերենի և մանջուրերենի ամբիոններով: Ֆակուլտետը ընդլայնվեց ի հաշիվ Կազանի համալսարանի դասախոսական կազմի և դարձավ համալսարանի առաջատար մասնաճյուղերից մեկը: Մասնաճյուղի բաղման հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ 1855 թ. օգոստոսի 27-ին: Բացման խոսքով հանդես եկավ նորաբաց ֆակուլտետի դեկան, պրոֆ. Ա. Փյաղեմ-Բեկը: Վառ գույներով նկարագրելով մասնաճյուղի ապագան, նա, մասնավորապես նշեց, որ ինչպես դասախոսական կադրերի որակի ու քանակի, այնպես էլ առարկաների քանակի և ուսումնական գրականության հարստության մեջ ֆակուլտետը չունի իրեն հավասարը ընդոպայում: Այդ հայտարարությունը գուրկ չէր իրական հիմքից, քանի որ նոր մասնաճյուղը հենց սեղբից ունեցավ պրոֆեսորադասախոսական ուժեղ կազմ՝ Ա. Փյաղեմ-Բեկ, Ա. Մոխրիսկի, Վ. Վասիլև, Ի. Բերեգին, Ա. Պոպով և այլք: Այս անունների շարքում իր արժանի տեղը գրավեց հալոց լեզվի ամբիոնի հիմնադիր անդամ և վարիչ Նիկիտա Բերոյանը (Բերոն)։ Ցավոք, հայագիտության ակունքների մոտ կանգնած այս երախտավորների կյանքը և դիտարկանքները գործունեություն

⁷ Государственный исторический архив Ленинградской области (այսուհետ՝ ГИАЛО). ф. 14, оп. I, д. 4681. л. 2—3.

⁸ Նույն տեղում, թ. 3:

⁹ В. В. Григорьев, Императорский С.Петербургский университет в течение первых пятидесяти лет его существования, СПб., 1870, с. 118.

թյունը պատշաճ լուսաբանում և գնահատական չի ստացել հայ պատմագիտության մեջ, ն. Բերոկի գիտամանկավարժական գործունեության մասին միայն որոշ սեղմ տեղեկություններ ենք գտնում Վ. Գրիգորևի «Ս. Պետերբուրգի կայսերական համալսարանը իր գոյության առաջին հիսնամյակի ընթացքում» գրքում (էջ 268—269)։ Նրա գործունեությանը, որպես գրաքննիչի, անդրադարձել է նաև Ս. Արեշյանը՝ իր արժեքավոր մենագրության մեջ¹⁰։ Ի պատիվ հեղինակի, պետք է ասել, որ նա արժանին է հատուցել վաստակաշատ գիտնականին՝ նրան համարելով առաջադեմ հայացքների տեր և իր ժողովրդին նվիրված անձնավորություն։ Այսքանով, փաստորեն, սպառնում է մեզ հայտնի գրականությունը նրա մասին, եթե չհաշվենք 1952 թ. Արաքս-մանի և Զ. Վարդանյանի հրապարակած «Միքայել Նալբանդյան» պիեսը, որտեղ հեղինակները, ստալինյան օրերի ոգուն համապատասխան և առանց որևէ հիմնավորման նրան (ճիշտ է՝ Ասոկ ազգանունով) ներկայացնում են որպես ոստիկանական գործակալ և սադրիչ¹¹։ Այնինչ, Բերոյանն անցել է կյանքի և գիտամանկավարժական գործունեության հիանալի ուղի։ Նիկիտա Բերոկը (Բերոյան) ծնվել է 1795 թ. Աստրախանում։ Սկզբնական կրթությունը ստացել է տեղի Աղաբաբյան ուսումնարանում, որն ավարտելուց հետո ստանձնել է նույն ուսումնարանի առաջին դասարանի հայոց լեզվի ուսուցչի պաշտոնը¹², 1816 թ. նա ընդունվում է Բժշկավիրաբուժական ակադեմիայի մոսկովյան բաժանմունքը՝ որտեղ 1817 թ. ստանում է կուլեգիական ռեզիստորատորի աստիճան։ 1819 թ. թողնում է ուսումնառությունը, իսկ 1821 թ. մարտին պետական ծառայության անցնում Լեռնաազահանքային գործերի պետական դեպարտամենտում, որտեղ և 1822 թ. ստանում է հաջորդ՝ նահանգային քարտուղարի աստիճանը¹³։ Սակայն ուսման տենչը չի լքում նրան, 1823 թ. արգեն արտաքին գործերի մինիստրությանը կից արևելյան լեզուների ուսումնական բաժանմունքի սան էր՝ տարեկան 100 ռ. աշխատավարձով։ Ցուցաբերելով նախանձելի աշխատասիրություն և ընդունակություններ՝ 1826 թ. նա ստանում է 10-րդ կարգի թարգմանչի աստիճան։ Թարգմանչի պետական ծառայությունը Բերոկը սկսում է Անդրկովկասում՝ որպես Վրաստանի գլխավոր կառավարչի պարսկերենի թարգման և գործուն մասնակցություն ունենում 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմին։ 1827 թ. ստանում է տիտղոսակիր խորհրդականի աստիճան, իսկ հաջորդ տարի պարգևատրվում է ս. Աննայի 3-րդ աստիճանի շքանշանով, ստանալով նաև դրամական պարգև՝ տարեկան աշխատավարձի չափով (360 ռուբլի ոսկով)¹⁴։ 1829—1836 թթ. Բերոկը էրզրումի ռուսական հյուպատոսության թարգմանն էր։ Այստեղ ևս ցուցաբերելով աշխատասիրություն և նկատելի կազմակերպչական ունակություններ՝ 1834 թ. ստանում է հաջորդ՝ կուլեգիական ասեսորի աստիճանը. իսկ 1835 թ., երբ ամբողջ 6 ամիս հյուպատոսի բացակայության ընթացքում փաստորեն տնօրինում է հյուպատոսարանի բոլոր գործերը, արժանանում է նոր դրամական պարգևի¹⁵։ 1835 թ. նա գործուղվում է Թիֆլիս՝ պետական ունեցվածքի հաշվառման հանձնաժողովի տրամադրության տակ, որպես հայոց լեզվի թարգման։ Այդ հանձնաժողովի կազմում էլ ծառայում է մինչև 1841 թ.¹⁶։ Երբ վերոհիշյալ հանձնաժողովը ավարտում է իր գործունեությունը, Բերոկը նշանակվում է պետական ունեցվածքի մինիստրության Վիտեբսկի օկրուգային բաժանմունքի ղեկավար, ուր 1843 թ. ստանում է արքունի

¹⁰ С. Г. Арешян, Армянская печать и царская цензура, Ереван, 1957, с. 113—121.

¹¹ Սովետական գրականություն և արվեստ, 1952, № 6, էջ 62—103։

¹² ГИАЛЮ, ф. 14, оп. I, д. 4728, ж. 7.

¹³ Նույն տեղում։

¹⁴ Նույն տեղում, թ. 7, հակ.։

¹⁵ Նույն տեղում, թ. 8։

¹⁶ Նույն տեղում։

խորհրդականի աստիճան¹⁷։ Թվում է, թե պետական պաշտոնական սանդուղքի նոր, ավելի բարձր աստիճաններին հասնելը լոկ ժամանակի հարց էր. և որ Բերոնի համար կանխորոշված էր ռուսական բարձրաստիճան չինովնիկի ճակատագիրը։ Սակայն հետևում է կտրուկ շրջադարձ։ 1844 թ. նա կամովին լքում է պետական ծառայությունը և Պետերբուրգի համալսարանի նորաբաց հայոց լեզվի ամբիոնում անցնում դասախոսական աշխատանքի։ 49-ամյա Բերոնը իր գիտամանկավարժական գործունեության հենց սկզբից հանդես է բերում հիրավի երիտասարդական եռանդ։ Քաջ գիտակցելով, որ դասավանդման որակը մեծապես պայմանավորված է առարկային հատկացված դասաժամերի քանակի, ուսումնական ձեռնարկների և բառարանների առկայությամբ, իր համալսարանական գործունեության առաջին իսկ օրերից նա ամենայն եռանդով ձեռնամուխ է լինում այդ խնդիրների կատարմանը։ Արդեն 1845 թ. նա համալսարանի ղեկավարությանն է ներկայացնում մի գրություն, հիմնավորելով այն միտքը, թե հայոց լեզվի ճշգրիտ և հաջող ուսումնասիրման համար երրորդ և չորրորդ կուրսերում հատկացված ժամերից բացի անհրաժեշտ է ժամեր հատկացնել նաև առաջին և երկրորդ կուրսերում։ Արևելյան լեզուների բաժինը համաձայնում է նրա բերած փաստարկներին և որոշում երկրորդ կուրսի ուսումնական ծանրաբեռնվածությանը ավելացնել հայոց լեզվի շաբաթական երկու դասախոսություն¹⁸։ Մինչ այդ, դեռ 1844 թ. Բերոնը ռեկտորատին էր ներկայացրել գրքերի մի ցուցակ, որոնք, ըստ նրա, անհրաժեշտ էին նորաբաց ամբիոնի ուսումնական աշխատանքներն սկսելու համար¹⁹։ Այդ ցուցակում տեղ են գտել 1836—1837 թթ. Վենետիկի Մխիթարյանների հրատարակած նոր հայկազյան երկհատոր բառարանը, հայֆրանսիական համառոտ բառարանը, Ֆրանս-հայ-թուրքերեն բառարանը, Գաբրիել Վարդապետի (Ավաղովսկու) «Հայոց բերականությունը», Խորենացու «Հայոց պատմությունը», Զամչյանի «Հայոց պատմությունը», Եղիշեի, Ղազար Փարպեցու, Ազաթանգեղոսի գործերը, Հովհաննես կաթողիկոսի «Հայոց պատմությունը», Գրիգոր Նարեկացու «Մատյանը» և այլն։ Ընդամենը, գրքերի ձեռքբերումը արագացնելու համար նա խորհուրդ էր տալիս դիմել Ղրիմ՝ Կարասու-Բազարի հայ կաթողիկ վաճառականներին, որոնք կազմակերպելու էին վերոհիշյալ գրքերի առաքումը Խալիպայից, ինչպես նաև դիմել էջմիածին՝ Ամենայն հայոց կաթողիկոսին։ Ինչպես տեսնում ենք, նշված գրքերի ցուցակում բացակայում են ուսումնական ձեռնարկներն ու դասագրքերը, որոնց ստեղծմանն էլ ամենայն եռանդով ձեռնամուխ եղավ ն. Բերոնը։ Նրա անխնայ աշխատանքի առաջին արդյունքը դարձավ «Հայկական լեզվի տարրական հիմքերը»՝ բերականության դասագիրքը, որի ձեռագիր օրինակը գրախոսման հանձնվեց ակադեմիկոս Բրոսսին, և վերջինիս գրական պնդանական ստանալուց հետո ուղարկվեց տպագրության։ Գրքի հրատարակչության համար դրամական միջոցներ ձեռք բերելու նպատակով լուսավորության մինիստրությունը, համալսարանի խորհուրդը և ռեկտոր Պետին և՛ ղրմեցին Պետերբուրգի ուսումնական օկրուգի հոգաբարձությանը՝ 2200 ռուբլի հատկացնելու խնդրանքով²⁰։ Այս հարցում բացասական դեր խաղաց Կովկասյան կոմիտեի նախագահ Իշխան Չեռնիշովի դիրքորոշումը։ Ըստ նրա, գրքի տպագրման համար գումարների հատկացումը նպատակահարմար չէր, քանի որ արևելյան լեզուների բաժնում սովորում էին ընդամենը 7 կովկասյան ուսանողների ընդունելություն չէր նախատեսվում, այնպես որ Բերոնի քերականության հրատարակման համար 2200 ռ. ծախսելն անիմաստ էր, առավել ևս, որ կովկասյան ուսումնական օկրուգի հիմնադրման կապակցությամբ նախատեսվում էր այնտեղ հիմնել հատուկ կոմիտե, որը ղեկավարելու էր նաև

17 Նույն տեղում։

18 Նույն տեղում, Ի. 10։

19 Նույն տեղում, ց. 1. հ. 11, գ. 1703, Բ. 2, 13։

20 Նույն տեղում, Բ. 15։

նորարաց ուսումնական օկրուգի գիմնազիաների ու դպրոցների համար դասագրքերի ու ուսումնական ձեռնարկների հրատարակմամբ: Առաջարկվում էր Բերոնի վերը նշված դասագիրքը գրախոսման ուղարկել այդ կոմիտեին, և լեթ վերջինս կգտնի, որ այն օգտակար է ոչ միայն Պետերբուրգի համալսարանի կովկասյան ուսանողների, այլև անդրկովկասյան գիմնազիաների սաներին, ասյա միայն այդ դեպքում գանձարանը կարող էր իր վրա վերցնել գրքի հրատարակման ծախսը²¹: Տեսնելով այս ձգձգումը և ձգտելով արագացնել հրատարակման դրոժը՝ Բերոնը ոչ միայն հրաժարվեց հասանելիք հոնորարից, այլև իր վրա վերցրեց դասագրքի հրատարակման ծախսը: Աշխատությունը լույս տեսավ 1850 թ. հոկտեմբերին և արժանացավ Պետերբուրգի գիտական հասարակայնության բարձր գնահատականին: Շուտով այն ներկայացվեց գիտությունների ակադեմիայի մրցանակաբաշխությանը և ստացավ երկրորդ դեմիդովյան մրցանակ²²: Գիրքը երկար տարիներ հայոց լեզվի քերականության միակ դասագիրքն էր համալսարանում: Բերոնի հետագա գիտական աշխատանքը նվիրված էր «ոուսերեն-հայերեն-ֆրանսերեն» եռահատոր բառարանի կազմելուն: 1857 թ. նա խնդրում է թույլ տալ իր բաղում տարիների աշխատանքի արդյունքը՝ նշված բառարանի առաջին հատորը, ներկայացնել ֆակուլտետի խորհրդի քննարկմանը: Ֆակուլտետի խորհուրդը բառարանը գրախոսելը հանձնարարեց թաթարական (ադրբեջանական) լեզվի ամբիոնի վարիչ՝ հայագրի Լ. Բուդաղովին, որը նույն թվականի ապրիլի 19-ին խորհրդին ներկայացրեց իր գրավոր կարծիքը՝ «Բերոնի բառարանը կազմված է շատ մանրամասնորեն և բարեխիղճ, գործի լիակատար իմացությունով: Այն որակով ու հարստությամբ ոչ միայն մի քանի անգամ գերազանցում է մինչ այդ լույս տեսած և մատենագրական հնություն դարձած Ալամդարովի բառարանը, այլև 1854 թ. Թիֆլիսում լույս տեսած Իրիցիպուխովի բառարանը»: Բուդաղովի կարծիքով, այն անպայմանորեն անհրաժեշտ էր ինչպես գիտական շրջաններին՝ հայոց լեզուն և պատմությունը ուսումնասիրելու և դասավանդելու համար, այնպես էլ առևտրական շրջաններին և չինովնիկությանը²³: Ելնելով բառարանի նման բարձր գնահատականից՝ արևելյան լեզուների ֆակուլտետի խորհուրդը 1857 թ. ապրիլին դիմում է համալսարանի խորհրդին, բառարանի առաջին հատորը հրատարակելու խնդրանքով: Համալսարանի դրամական սուղ չրություն և բյուրոկրատական քաջշուկի պատճառով բառարանը չտպագրվեց: Սակայն համալսարանի խորհուրդը, բարձր գնահատելով Բերոնի գիտամանկավարժական գործունեությունը, 1859 թ. դիմեց Պետերբուրգի ուսումնական օկրուգի հոգաբարձությանը՝ Բերոնին և Լ. Բուդաղովին էքստրաօրդինար պրոֆեսորի կոչում շնորհելու խնդրանքով, մինչև պրոֆեսորական հաստիքներ ազատվելը նախկին՝ ազյունկտի հաստիքով աշխատելու պայմանով: Տավոթ, հոգաբարձու հայագրի Դելյանովը մերժում է խնդրանքը՝ պատճառաբանելով, թե ինքը չի կարող թույլ տալ, որ պրոֆեսորներն աշխատեն ազյունկտի հաստիքով և որ դա հակասում է ինչպես գիտական էթիկայի, այնպես էլ պրոֆեսորներ ընտրելու կանոններին²⁴: Չնայած մերժմանը և առաջացած տարիքին, շուրջ երկու տարի ևս Բերոնը շարունակում է գլխավորել հայոց լեզվի ամբիոնը:

1861 թ. Լ. Բերոնը թողնում է ծառայությունը:

Հայոց լեզվի և պատմության ամբիոնի ղեկավարումը Լ. Բերոնից հետո ստանձնեց հայագիտության մեկ այլ երախտավոր՝ շնորհաշատ գիտնական ու մանկավարժ, արևելագետ և լեզվաբան Քերովբե Պատկանյանը: Նա ծնվել է 1838 թ. մայիսին, Նոր Նախիջևանում, հոգևորականի ընտանիքում: Սկզբնական կրթությունը ստացել է Ստավրոպոլի «Կովկասյան» գիմնազիայում, ա-

21 Նույն տեղում, թ. 35—38:

22 С. Г. Аресян, նշվ. աշխ., էջ 118:

23 ГИАЛО, ф. 14, оп. 3, д. 15397, л. 1, 2.

24 Նույն տեղում, ֆ. 14, ց. 3, գ. 15397. թ. 1—2:

կայն 1843 թ. երկրորդ դասարանից տեղափոխվել է Մոսկվա և ուսումը շարունակել լազարյան ճեմարանում՝ աշակերտելով Մ. Էմինին և Կ. Կոսովիչին։ Ավարտելով ճեմարանը, 1851 թ. Ք. Պատկանյանն ընդունվում է Դորպատի համալսարանի կամերալ (վարչական-տնտեսագիտական) ֆակուլտետը։ Նրա ուսման ծախսերը իր վրա էր վերցրել հայ մեկենաս Ա. Ակիմովը, որն օգնում էր այն հայ ուսանողներին, որոնք լրջորեն պատրաստվում էին իրենց նվիրել եկեղեցական գործունեությանը, սակայն Ք. Պատկանյանն անբան էլ ասկեստական կյանք չէր վարում, որի հետևանքով ղրկվեց թոշակից և երկրորդ կուրսից ստիպված էր թողնել համալսարանն ու անցնել ծառայության Պետերբուրգի հայկական եկեղեցում՝ որպես դպիր։ 1853 թ. նա ընդունվում է Պետերբուրգի գլխավոր մանկավարժական ինստիտուտի պատմության բաժինը։ 1857 թ. ավարտելով ինստիտուտը, ստանձնում է Անդրկովկասի «Օրիորդաց ինստիտուտի» ավագ ուսուցչի պաշտոնը։ Ք. Պատկանյանը, որը դեռևս լազարյան ճեմարանում ուսանելիս լրջորեն տարված էր հայ քնարերգությանը, իսկ մանկավարժական ինստիտուտում սովորելու ընթացքում կանոնավոր հաճախում էր արևելյան լեզուների ֆակուլտետի դասախոսություններին, Թիֆլիսում աշխատելու տարիներին հավաքում է հայոց լեզվին և պատմությանը վերաբերող մեծ քանակությամբ նյութեր։ Ցանկանալով ծանոթանալ արևելագիտության եվրոպական դպրոցին՝ Պատկանյանը 1858, 1860 և 1861 թթ. գնում է Եվրոպա, Վիեննայում և Վենետիկում ծանոթանում է Մխիթարյանների հարուստ ձեռագրերին, հաճախում ականավոր արևելագետներ Դյուլոյրի (Փարիզ) և Պետերմանի (Բեռլին) դասախոսություններին։

Պետերբուրգի համալսարանի խորհուրդը 1861 թ. հոկտեմբերի 6-ին Քերովբե Պատկանյանին միաձայն ընտրեց հայոց լեզվի ամբիոնի վարիչ։ Դեռ 1861 թ. հունվարին նա փայլուն հանձնել էր արևելյան լեզուների մագիստրոսի աստիճան ստանալու համար պահանջվող բոլոր քննությունները՝ հայոց լեզվից և պատմությունից, պարսկերենից և աշխարհագրությունից, դրական գրախոսականներ էր ստացել նաև ներկայացված գրավոր աշխատանքների վերաբերյալ²⁵։ Ընդամենը երեք տարում նա պաշտպանում է ինչպես մագիստրական (սկսած 1861 թ. արեւմտահայկական պատմության փորձ՝ ըստ հայ պատմիչների հաղորդած տեղեկությունների», 1863 թ.), այնպես էլ դոկտորական (սկսած 1864 թ. արեւմտահայկական պատմության մասին», 1864 թ.) դիսերտացիաները և արժանանում սկզբում էքստրաօրդինար (1871 թ.), ապա օրդինար պրոֆեսորի (1872 թ.) կոչումներին։ Հաջորդությամբ համատեղելով դասախոսական և գիտահետազոտական աշխատանքները, նա 1870—1880-ական թվականներին մի քանի անգամ գործուղվում է Արևմտյան Եվրոպա և Կովկաս, ուր մեծ եռանդով զբաղվում է հայկական ձեռագրերի ուսումնասիրությամբ։ Դրա արդյունքն էին պատմության, լեզվաբանության և հնագիտության բնագավառում նրա գրած մոտ 30 անուն աշխատություններն ու թարգմանությունները։ Ընդարձակ ծանոթագրություններով գիտական լայն շրջանառության մեջ դնելով հորենացու, Ղեռնդի, Մխիթար Անեցու, Շիրակացու, Սեբեոսի, Թովմա Արծրունու և հայ այլ հեղինակների աշխատությունները, նա անգնահատելի գործ է կատարել ինչպես հայ մշակույթի ժողովրդականացման, այնպես էլ համալսարանում հայոց լեզվի ու պատմության դասավանդման որակը նոր, ավելի բարձր մակարդակի բարձրացնելու ուղղությամբ։ Թեպետ նա հայագիտության մեջ նոր դպրոց չհիմնեց կամ առաջ չքաշեց ուսումնասիրության նոր եղանակներ և մեթոդներ, սակայն իր սուր վերլուծական մտքի, հսկայական աշխատասիրության ու գիտական բեղունության շնորհիվ նա կարճ ժամանակամիջոցում ձեռք բերեց համաեվրոպական ճանաչում։ Նրա գործերը թարգմանվում են բազմաթիվ լեզուներով։ 1873 թ. Փարիզում, 1874 թ. Լոնդոնում և 1883 թ. Վենետիկում տեղի ունեցած արևելագետների համաժողովներում նա ներկայացնում է ուսական արևելագիտությունը, ընտրվում բազմաթիվ գի-

²⁵ ГИАЛО, ф. 14, оп. 3, д. 15465, л. 1, 2.

տական ընկերությունների անդամ: 1882—1885 թթ. Պատկանյանն անընդմեջ ընտրվել է Կայսերական հնագիտական ընկերության արևելյան բաժանմունքի վարիչ, իսկ 1885 թ.²⁶ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ: Քերտվել Պատկանյանն ընդհանուր ճանաչման հասավ հատկապես պատմական հուշարձանների գնահատման և նրանց աղբյուրների քննական վերլուծության բնագավառում: Բնութագրական է, որ նրա խիստ քննադատական վերաբերմունքը վրացական տարեգրությունների նկատմամբ (տե՛ս «Ժողովրդական լուսավորության միևնույնության ամսագիր» 1883, դեկտեմբերի) առիթ տվեց վրաց պատմաբան Դ. Բաքրաձեին իր «Պրոֆեսոր Պատկանովը և վրաց պատմության աղբյուրները» (Թիֆլիս, 1884) գրքում Պատկանյանին մեղադրել Վրաց ժողովրդի ու նրա պատմության նկատմամբ կարծեցյալ անբարյացակամության մեջ: Ի պաշտպանություն Պատկանյանի, ֆակուլտետի խորհրդի մյուս անդամների հետ իր ձայնը բարձրացրեց Ն. Մառը, նշելով, որ «Պատկանովին հիմնականում մեղադրում են մարդիկ, որոնք ծանոթ չեն նրա գիտական աշխատանքների բնորոշ կողմին, և եթե նույնիսկ հաշվի չառնենք այն, որ նրա հայտնած կարծիքների նշանակալի մասը հարցին գիտական, քննադատական տեսանկյունից մոտենալու առաջին լուրջ փորձն է և արդարացվում ու հաստատվում է նորագույն հետազոտություններով, իսկ դրանք հաստատում են, որ վրացական տարեգրությունները ավելի ուշ շրջանում ենթարկվել են խմբագրման, չապա բավական է հիշեցնել, որ պրոֆեսոր Պատկանովը նույն անշառունջությամբ քննադատել է հայկական աղբյուրները, եթե դրանք նրան թվացել են ոչ հիմնավոր և լեգենդների վրա կառուցված: Այստեղից հետևում է, որ նրան խորթ են ազգայնամոլական նախապաշարումները, և նա ամեն ինչից վեր դասում է գիտական ճշմարտությունը: Անկողմնակալ մոտենալ փաստերին, անգամ եթե դրանք վերաբերում են քո ժողովրդի պատմությանը, ահա թե ինչ է քարոզում նա իր դասախոսությունների ժամանակ»²⁶, Գիտամանկավարժական շուրջ 30-ամյա բեղմնավոր գործունեության շնորհիվ Պատկանյանն ինչպես հայագիտությունը, այնպես էլ հայոց լեզվի ու պատմության դասավանդումը համալսարանում բարձրացրեց նոր մակարդակի, դրանով իսկ ուղի հարթելով արևելագիտության այնպիսի երախտավորի առջև, ինչպիսին էր նրա աշակերտ և գործի անմիջական շարունակող Նիկողայոս Մառը, որի օրոք արևելագիտության ուսման դպրոցը հասավ իր գագաթնակետին:

Ն. Մառը 1900 թվականից հայ-վրացական բանահյուսության ամբիոնի վարիչն էր: Նա մեծ աշխատանք կատարեց համալսարանում հայոց լեզվի ու պատմության դասավանդումը նոր, ժամանակակից մակարդակի հասցնելու ուղղությամբ: Տարեվերջյան և մագիստրական քննությունների ժամանակ աչքի էր զարնում առարկաների չափից ավելի առատությունը և սոցիալ-տնտեսական բնույթի հարցերի սակավությունը: Մատնանշելով այդ հանգամանքը՝ Մառը ֆակուլտետի խորհրդին առաջարկեց վերանայել ինչպես ուսումնական, այնպես էլ քննական ծրագրերը: Խորհրդին ներկայացրած նախագծում նա նշում է, որ «հայկական բանահյուսության մագիստրոսի կոչման համար տրվող քննական առարկաները արդեն վաղուց չեն համապատասխանում արդի պահանջներին, որոշ առարկաներ, ինչպես, օրինակ, «Արիական ժողովուրդների պատմությունը», ամբողջ ֆակուլտետի կողմից դիտվում են որպես արխայիկ մնացորդ, իսկ որոշ, մեր սանկրիտ-պարսկա-հայկական բաժնի համար պարտադիր քննական առարկաներ, ինչպես, օրինակ՝ նոր պարսկերենը, չեն արտահայտված մագիստրական քննական ծրագրերում: Արևելագիտության մեր բաժնի զարգացումը թելադրում է նոր պահանջներ, նոր առարկաներ, որոնք կնպաստեն խորը մասնագիտացմանը և լիովին պետք է ար-

²⁶ Н. Я. Марр. К. П. Патканов. Биографический словарь профессоров и преподавателей императорского Санкт-Петербургского университета за истекшую третью четверть века его существования, 1869—1894 гг., т. II, СПб., 1898, с. 94.

տահալստվեն ֆակուլտետի ինչպես ուսումնական, այնպես էլ մագիստրական քննական ծրագրերում: Ելնելով ասվածից՝ ֆակուլտետի քննարկմանն է ներկայացվում հայ վրացական բանահյուսության բաժնի կողմից մշակված քննական առարկաների ցուցակը, որը պարտագիր ենք համարում հայ-վրացական բանահյուսության մագիստրոսի կոչման համար տրվող քննություններում: Հայկական բանահյուսության մագիստրոսի կոչման համար գլխավոր առարկաներ պետք է համարվեն 1. հայոց լեզուն. ա) հին գրական, բ) նոր գրական, 2. ա) հայ լեզվաբանություն և հայկական որևէ բարբառ դիսերտանտի ընտրությամբ, բ) հայ գրականության պատմություն, 3) հայոց պատմություն և հնագիտական հուշարձաններ: Երկրորդական առարկաներ՝ 1) վրացական հին գրական լեզու, 2) դիսերտանտի հայեցողությամբ մասնագիտական առարկաներից մեկը՝ ա) հաբեթական լեզվաբանություն և հաբեթական լեզուներից մեկը, բ) արիական լեզուների քերականության համեմատական վերլուծություն և արիական լեզու (ավեստական հին պարսկերեն, պահլավերեն), գ) վրաց պատմություն և հնագիտական հուշարձաններ²⁷: ինչպես տեսնում ենք, քննական ծրագրի նախագծում բացակայում էր ոչ միայն եվրոպական երկրների, այլև նույնիսկ ռուսաց պատմությունը, դրա փոխարեն՝ Արևելքի ժողովուրդների պատմությունը դիտվում էր դիալեկտիկական միասնության մեջ՝ ապագա գիտնականից պահանջելով ինչպես լեզվական, այնպես էլ պատմական խոր գիտելիքներ:

Խոսելով Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետի հալազգի դասախոսների մասին՝ ավելորդ չենք համարում համառոտակի անդրադառնալ հալազգի գիտնական և մանկավարժ, էքստրասոդիլար պրոֆեսոր Ղաղար Բուդաղովի (Բուդաղյանի) գործունեությանը: Նա չնայած տարիներ շարունակ ղեկավարել է թաթարական (ադրբեջաներեն) լեզվի ամբիոնը, սակայն գործունե մասնակցություն է բերել նաև հայոց լեզվի և պատմության ամբիոնի աշխատանքներին, գրախոսելով ինչպես հալազգի գասախոսների, այնպես էլ ուսանողների մի շարք գրավոր աշխատանքներ: Ղաղար Բուդաղովը ծնվել է Աստրախանում 1812 թ. ապրիլին, սկզբնական կրթությունը ստացել է տեղի Աղաբաբյան ուսումնարանում, ապա դիմնագիայում: 1840 թ. նա ոսկե մեդալով և թեկնածուի կոչումով ավարտում է Կազանի համալսարանը: Հետո որոշ ժամանակ աշխատում է Թիֆլիսի արական գիմնազիայում՝ որպես թաթարերենի (ադրբեջաներեն), իսկ օրիորդաց ինստիտուտում՝ որպես թվաբանության ուսուցիչ: 1840-ական թվականների վերջին տեղափոխվում է Պետերբուրգի համալսարան, որտեղ գլխավորում է թաթարերեն լեզվի ամբիոնը: 1863 թ. Լ. Բուդաղովը ստանում է դոցենտի կոչում և միաժամանակ հրավիրվում է թաթարերեն ավանդելու կովկասյան կոմիտեի սաների մի քանի ուսումնարաններում և հիմնարկներում՝ արտադրական ուսումնարանում և լեռնային ու անտառային ինստիտուտում: 1868 թ. նա նաև արտաքին գործերի մինիստրության Ասիական դեպարտամենտում թաթարերենի և հայերենի թարգմանիչն է: Թիֆլիսում ու Պետերբուրգում աշխատելու տարիներին նա ներկայացնում է մի շարք գիտական աշխատություններ ու մեթոդական ձեռնարկներ, որոնցից հիշատակության առավել արժանի են «Թուրք-թաթարական այբբենարանը» (Թիֆլիս, 1844 թ.), «Թաթարերենի լայրճառի ուսումնասիրման պրակտիկ ձեռնարկը» (Սանկտ Պետերբուրգ, 1857 թ.) և «Թուրք-թաթարերենի բարբառների ռուսերեն թարգմանության համեմատական բառարանը» (Սանկտ Պետերբուրգ, 1871)²⁸, Վերջինս մասնագետների վկայությամբ չի կորցրել իր գիտական արժեքը և վերջին անգամ վերահրատարակվել է 1960 թ.:

²⁷ ГИАЛО, ф. 14, оп. 1, д. 107484, л. 2—3.

²⁸ В. Смирнов, Д. З. Будагов, (Биографический словарь..., т. 1, СПб., 1896, с. 95—96).

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Պետերբուրգի Համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետը և մասնավորապես նրա հայոց լեզվի և պատմության ամբիոնը վերը նշված երախտավորների ջանքերով XIX դ. երկրորդ կեսից սկսած դառնում են Ռուսաստանում հայագիտական մտքի ուսուցման և զարգացման կարևորագույն կենտրոններից:

Հայ հասարակական-քաղաքական և մշակութային կյանքում հետագայում նկատելի դեր խաղացած մի շարք հայ ուսանողների գործերի ուսումնասիրությունից պարզ են դառնում դասավանդվող առարկաների, ուսումնական պլանների և ծրագրերի հարցերը:

1846 թ. Կովկասից Պետերբուրգի Համալսարան գործուղվող Թիֆլիսի գիմնազիայի վից շրջանավարտների թվում էր ապագա դրամատուրգ Գաբրիել Սունդուկյանը, որն իր հինգ ընկերների՝ Վասիլի Սարաջևի, Պյոտր Մեզինովի, իշխան Վասիլի Ցիցիանովի, իշխան Յասսե Ճավճավաձեի և Գեորգի Ցինամ-ձղվարովի հետ օգոստոսի 24-ն հասավ Պետերբուրգ և ձեռնամուխ եղավ ընդունելության քննությունների հանձնմանը: Հաջորդ տարի նրանց միացան հայագիտի Իվան Կայթմազովը (Ղայթմազյանց), Ազաբեկ Նդիգարյանցը և իշխան Կոնստանդին Մելիքովը²⁹: Ինչպես տեսնում ենք, ապագա ուսանողների ազգանուններն ու տիտղոսները ցույց են տալիս, որ ժողովրդական լուսավորության միևնույն ժամանակվա Վոլկասի կառավարչապետ Վորոնցովն աշխատել են հնարավորին չափ հարազատ մնալ 1844 թ. կայսերական հրամանագրին: Ապագա ուսանողների ընտրության հարցում համալսարանն էլ ուներ իր պահանջները՝ ընտրել այնպիսի շրջանավարտների, որոնք միաժամանակ տիրապետում էին հայերեն, վրացերեն և թաթարերեն լեզուներին՝ չհաշված պահանջվող ռուսերենը, ֆրանսերենը և լատիներենը: Պետերբուրգի ուսումնական օկրուգի հոգաբարձու իշխան Վոլկոնսկին համալսարանի ռեկտորի այս պահանջին ի պատասխան հայտնում է, որ Թիֆլիսի գիմնազիայում կովկասյան լեզուների ժամերը զուգահեռ են և որ նույն ժամին հայերը անցնում են հայերեն, վրացիները՝ վրացերեն և շատ դժվար է ընտրել աշակերտներ, որոնք տիրապետում են երեք լեզվին էլ բավարար չափով³⁰: Առաջին բարդությունները ծագում են արդեն ընդունելության քննությունների ժամանակ, երբ կովկասյան սաների մեծ մասի թվանշանների ընդհանուր միջին գնահատականը երեք թվանշանից ցածր է լինում, այսպես օրինակ՝ գիմնազիայի ամենափայլուն շրջանավարտներից մեկը՝ Գ. Սունդուկյանը, ստանում է հետևյալ գնահատականները՝ աստվածաբանություն (զակոն բոժի)-չի քննվել, տրամաբանություն-երկու, աշխարհագրություն-երկու, ընդհանուր պատմություն-երկու, ռուսաց պատմություն-մեկ, մաթեմատիկա-երեք, ֆիզիկա-երեք, ռուսաց լեզու-երեք, լատիներեն-մեկ, ֆրանսերեն-երեք, հունարեն՝ չի քննվել³¹: Ավելի բարձր չէին նաև նրա ընկերների հաջողությունները: Համալսարանի խորհուրդը որոշում է. «Ինչ վերաբերում է Թիֆլիսի գիմնազիայի սաներ Մեզինովին, Սարաջևին, Սունդուկովին, Ցինամ-ձղվարովին, իշխան Ճավճավաձեին և իշխան Ցիցիանովին, ապա տեղյակ դարձնել Սանկտ-Պետերբուրգի ուսումնական օկրուգի պարոն հոգաբարձուին, որ քննությունների ժամանակ ցույց տված նրանց արդյունքներով նրանք չեն կարող ուսանող ընդունվել ըստ գոյություն ունեցող կանոնների»³²: Նկատի ունենալով Նիկոլայ I-ի հրամանը կովկասյան սաներին համալսարան ընդունելու մասին՝ ուսումնական օկրուգի ղեկավարությունն անհնար է համարում նրանց համալսարան ընդունելը և դիմելով լուսավորության մինիստրին, առաջարկում է ընդունել կովկասյան սաներին՝ առաջին կուրսում երկու

29 ГИАЛО, ф. 14, оп. I, д. 4798, Кондацитные списки студентов 1847—1848 гг.

30 ГИАЛО, ф. 14, оп. I, д. 4681, с. 48.

31 Գ. Սունդուկյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 4, Երևան, 1961, էջ 549:

32 Գ. Արով, Գաբրիել Սունդուկյան, Երևան, 1953, էջ 29:

տարի պահելու պայմանով՝ Հարցը բավական ձգձգվում է և դրականորեն լուծվում միայն հոկտեմբերի կեսերին:

Հավկասյան ուսանողների դժվարությունները դրանով չավարտվեցին: Դասավանդվող առարկաների և առանձնապես լեզուների առատությունը արդեն մի քանի ամիս հետո նրանց ստիպում է դիմել համալսարանի խորհրդին՝ առարկաների քանակը նվազեցնելու կամ էլ իրենց համալսարանից հեռացնելու խնդրանքով: Համալսարանի հոգաբարձությունը, գտնելով, որ վեց լեզուների միաժամանակյա ուսումնասիրումն, իրոք, դժվար է, համալսարանի խորհրդին, առաջարկում է՝ քննության առնել, թե որ ուսանողի համար որ առարկայի ուսուցումը կարելի է համարել ոչ պարտադիր³³, Ահա թե ինչ է գրում այդ առիթով Սունդուկյանը մոտը. «Երեկ մենք հոգաբարձուին խնդիր ներկայացրինք, թե եթե մենք պիտանի ենք իբրև անպագա դասախոսներ, հապա վրացերենի և հայերենի ինչ կարիք կա, իսկ եթե մեզանից սուտիճանավորներ են պատրաստելու վրաստանի համար՝ արաբերենի և տաճկերենի ինչ կարիք կա և այդ իսկ պատճառով խնդրեցինք, որ երեք լեզուներից մեկը կրճատեն, և եթե հնարավոր չէ, մեզ համալսարանից ազատեն, քանի որ ինն առարկա և ութ լեզու սովորել հնարավոր չէ: Եվ իրոք, որ համալսարանում սովորող 704 ուսանողից ոչ ոք այնքան բաժն չունի սովորելու, որքան մենք»³⁴: Սակայն շուտով աշխատասիրությունն ու ուսման տենչը տվեցին իրենց արդյունքը. արդեն տարեվերջյան քննությունները Սունդուկյանը հանձնում է փայլուն գնահատականներով: Փոխվում է նաև մոտը գրած նամակների բովանդակությունը՝ «Մայիսի 6-ին վրացերենից բոլորս էլ հինգ ստացանք, արաբերենի քննության ժամանակ մտավ հոգաբարձուն, շատ լավ հանձնեցի քննությունը և դարձյալ հինգ ստացա: Երեկ ուսաց լեզվի քննությունը գրավոր աշխատանք տվեցին, հենց որ հոգաբարձուն եկավ, ես ներկայացրի աշխատանքս և հոգաբարձուն հրամայեց, որ գրածս կարդամ: Երբ վերջացրեցի, հոգաբարձուն բացականչեց-բռավո, բռավո, բռավո, հետո ավագ պրոֆեսորը տոմս հանեց տվեց, երբ այն էլ ավարտեցի, հոգաբարձուն գլուխ տարավ շատ գովելով և, ցույց տալով ինձ, ասաց պրոֆեսորին, թե շատ լավ ուսանող է, անցյալ օրն էլ արաբերենից հաջող քննություն տվեց: Հանցեց ցուցակը և մատնանշեց ազգանունս՝ պրոֆեսորին ասելով՝ «Սուդուկյանու պյատս»: Իմ ընկերները նույնպես հաջող քննություն հանձնեցին և քննությունից հետո հոգաբարձուն բոլորիս մեծ շնորհակալություն հայտնեց»³⁵:

Ուսուցման դժվարությունն ընդգծելու համար բավական է նշել ուսումնասիրվող առարկաների բնավ էլ ոչ լրիվ ցանկը՝ ռուսաց լեզու, ռուս գրականություն և Ռուսաստանի պատմություն, անդլերեն, ֆրանսերեն, իտալերեն, լատիներեն լեզու և գրականություն, արաբերեն, պարսից լեզու և գրականություն, վրացերեն, հայոց լեզու և գրականություն, հայոց պատմություն, ընդհանուր պատմություն, ինչպես նաև կրոնի պատմություն: Միայն զարմանալ կարելի է, թե ինչպես կոմկասյան ուսանողների մեծ մասը, ոչ միայն հաջողությամբ ավարտեց Պետերբուրգի համալսարանի լրիվ դասընթացը, այլև ստացավ թեկնածուի դիպլոմ և աստիճան, որը տրվում էր բարձր առաջադիմություն ունեցող և դիսերտացիա ներկայացրած շրջանավարտներին: Սունդուկյանի դիսերտացիայի թեման էր՝ «Թուրքիկ հայացք պարսկական տաղաչափության բնույթի վրա»: Ֆակուլտետի պրոֆեսոր Միրզա Քյազեմ-Բեկի կողմից այն արժանացավ «հույժ բավարար» գնահատականի, 1850 թ. հոկտեմբերի 28-ին սենատը հաստատեց Գ. Սունդուկյանին «պոդատնոյ» հարկատու դասից դուրս բերելու միջոցառությունը³⁶, և սրանով ավարտվեց նրա ուսումնառությունը Պետերբուրգում:

³³ ГИАЛО. ф. 14, оп. 8, л. 4681, л. 168, 176.

³⁴ Գ. Սունդուկյան, նշվ. աշխ., էջ 77—78:

³⁵ Նույն տեղում, էջ 99—100:

³⁶ ГИАЛО, ф. 14, оп. 1, д. 4986, л. 1.

Հնդգծենք, որ բազում լեզուների և մի շարք առարկաների խորը իմացությունից զատ, համալսարանն իր սաներին տալիս էր հայացքների խորություն, դրականության և արվեստի նոր ամբողջում:

Ֆակուլտետում ուսուցանվող առարկաների դասավանդման մակարդակն ու խորությունը վկայում են նաև ֆակուլտետի՝ այդ շրջանի մեկ այլ սանի, ապագայում նշանավոր պատմաբան, հայագետ Գերասիմ Էզովի (Եզյան), մագիստրական քննությունների հարցերը՝ ռուսաց պատմությունից. 1) Հարաբերությունները մոսկովյան ցարերի և Կազանի խանության միջև, 2) Վանքապատկան կալվածքները և նրանց օտարումը հոգևոր գերատեսչությունից՝ պետական իշխանության ուժեղացմանը զուգահեռ, ընդհանուր պատմությունից. 1) Արևելքի և Արևմուտքի մերձեցումը հույն-հռոմեական դարաշրջանում և այն կարևորագույն իրադարձությունները, որոնք նպաստում են այդ մերձեցմանը, 2) Անգլիայի և Ֆրանսիայի մրցակցության պատմական ակունքները և մրցակցության հետագա խորացումը միջին դարերում, հայոց լեզվից և գրականությունից. 1) Ինչու է Մ. Խորենացին իր «Հայոց պատմությունում» գերադասել հունական աղբյուրները քաղեցականից, 2) V դարի հայ գրականության աղբյուրությունը XII դարի գրականության զարգացման վրա, Հայոց պատմությունից և աշխարհագրությունից. 1) Պարույր Սկայորդին որպես հայոց առաջին թագադրած արքա և Հայաստանի աշխարհագրական դիրքը նրա օրոք, 2) Հայկը որպես հայերի նախահայր³⁷, նա քննություններ է հանձնել նաև պարսկերենից, պարսից գրականությունից ու պատմությունից, քննություններից զատ, Էզովը պահանջվող կարգի համաձայն ֆակուլտետի խորհրդին է ներկայացրել նաև երկու գրավոր աշխատանք հայոց լեզու և պատմություն և առարկաներից՝ «Հայ-պարսկական հարաբերությունները Տիգրան I-ի օրոք» և «Հայ գրերի պատմությունը», որոնք գրախոսվել են Բերոնի կողմից և արժանացել խիստ դրական գնահատականի³⁸։ Այսպիսով, ինչպես տեսնում ենք, համալսարանի արևելագիտական ֆակուլտետը և նրա հայագիտական ամբիոնը շրջանավարտներին հաղորդում էին բազմաթիվ առարկաներից և լեզուներից բավական խորը գիտելիքներ։ Արդեն 1850-ական թվականներից գնալով ավելանում են հայ ուսանողների և շրջանավարտների գիտական աշխատանքները։ 1853 թ. ամենամյա հայտարարվող մրցութային աշխատանքների մեջ ոսկե մեդալի արժանացավ արևելյան լեզուների ֆակուլտետի երրորդ կուրսի ուսանող Հովակիմ Խիրջիևի «Առաջին օսմանյան քեռականությունից մանրամասն վերլուծություն» աշխատանքը³⁹, 1858 թ. հաջողությամբ մագիստրական քննություններ հանձնեց և իր «Հին Հայաստանի ներքին կենցաղը» թեմայով մագիստրական դիսերտացիան հրապարակային պաշտպանության ներկայացրեց ֆակուլտետի շրջանավարտ Գերասիմ Էզովը։ Նրան է հետևում նույն ֆակուլտետի շրջանավարտ Լազար Լազարևի «Մուհամեդ Ֆիզուլիի «Լեյլի և Մեջնուն» պոեմի վերլուծությունը» մագիստրական դիսերտացիայի հաջող պաշտպանությունը⁴⁰։

Հայ համալսարանականների գիտական հետաքրքրության հիմնական առարկան եղել է հայոց լեզուն և պատմությունը։ 1897 թ. Պետերբուրգի համալսարանում «Հայ բարբառագիտական ուսումնասիրություններ» թեմայով մագիստրական դիսերտացիա պաշտպանեց Լևոն Զարմայրի Մսերյանցը⁴¹, որը մանրամասնորեն ուսումնասիրել էր Մշո բարբառի ձևաբանությունն ու շարահյուսությունը։ Այս շրջանին է վերաբերում նաև Գրիգոր Խալաթյանցի «Հայոց վեպը Մովսես Խորենացու պատմության մեջ» մագիստրական դիսեր-

37 ГИАЛО, ф. 14, оп. 3, д. 15357, л. 1, 3, 6.

38 Նույն տեղում, թ. 6 հադ.

39 В. В. Григорьев, *Учл. аш.*, Историческая записка, СПб., 1870, с. XI XX.

40 ГИАЛО, ф. 14, оп. 3, д. 15455, л. 15.

41 Նույն տեղում, գ. 16060, թ. 25.

տացւայի պաշտպանութիւնը⁴²։ Ճիշտ է, ինչպես Մսերյանցը, այնպես էլ հալաթյանցը Մոսկվայի համալսարանի սաներ են, սակայն արեւելագիտութեան և հայագիտութեան բնագավառում իրենց առաջին լուրջ գիտական քայլերը նրանք կատարել էին Պետերբուրգի համալսարանի արեւելյան լեզուների ֆակուլտետում, փաստ, որը մեկ անգամ ևս հավաստում է վերջինիս և հալոց լեզվի ու պատմութեան ամբիոնի կարեւորագույն դերը։

Այսպիսով, Պետերբուրգի համալսարանը, հատկապես նրա արեւելյան լեզուների ֆակուլտետը և հալոց լեզվի ու պատմութեան ամբիոնը դարձան այն դարբնոցը, որտեղ իրենց գիտական մկրտութիւնը ստացան տասնյակ հայադետներ ու պատմաբաններ։ Ֆակուլտետի սաներից շատերը վերադարձան Անդրկովկաս և մասնավորապես Հայաստան, դառնալով այն պրոմթեսները, որոնք գիտութեան լույսը բերեցին հինավուրց հայրենիք։ Բարձր գնահատելով Պետերբուրգի համալսարանի խաղացած դերը հայ մշակութային կյանքում և հայ մտավորականութեան պատրաստման գործում՝ համալսարանի 50-ամյա շրջանի առթիվ մի խումբ հայ նախկին համալսարանականներ Երևանից հեռագրում են. «Պետերբուրգի համալսարանի նախկին ուսանողները Ձեզ հետ տոնում են փառավոր հոբելյանը և հիշում են իրենց «ալմա մատերին»⁴³։

ПРЕПОДАВАНИЕ АРМЕНОВЕДЕНИЯ В ПЕТЕРБУРГСКОМ УНИВЕРСИТЕТЕ (ВТОРАЯ ПОЛОВИНА XIX В.)

Б. Б. МАНУКЯН

Р е з ю м е

Развитие арменоведения в России было связано с осуществлением внешнеполитических задач России на Кавказе и Ближнем Востоке, требовавших знания восточных языков. Преподавание восточных языков в Петербургском университете было поставлено на более высокий уровень начиная с 1854 г. когда там был открыт факультет восточных языков и первым заведующим кафедрой стал Н. Бероян (Бероев), занимавший эту должность до 1861 г. Затем кафедрой заведовал Керопе Патканян (1861—1889), а с 1900 г. — Николай Марр. Студенты-армяне этого факультета наряду с другими восточными языками изучали армянский (древний и новый), историю Армении, армянскую литературу, армянское языкознание. Факультет восточных языков Петербургского университета и его кафедра армянского языка и истории явились тем центром, который подготовил многих известных арменоведов-языковедов и историков.

⁴² Նույն տեղում, Բ. 26։

⁴³ Юбилейный акт императорского Санкт-Петербургского университета. СПб., 1869, с. 139.